

uMeter ինտերակտիվ խաղարկության հատուկ դրույթներ և պայմաններ

Նկարագրություն

«Facebook» սոցիալական ցանցի Ucom TV էջում և SMS հաղորդագրությունների միջոցով անցկացվելու է Եվրո 2020 ֆուտբոլային խաղերի հաղթող թիմի կանխատեսման քվեարկություն:

Պայմաններ

Եվրո 2020 ֆուտբոլային յուրաքանչյուր խաղից առաջ Ucom բաժանորդները «SMS»-ի կամ ֆեյսբուք սոցիալական հարթակի միջոցով քվեարկում են իրենց նախընտրելի թիմի օգտին, որն իրենց կարծիքով հաղթող կճանաչվի: Մեկ օրվա ընթացքում քվեարկություն է անցկացվում միայն մեկ ֆուտբոլային խաղի համար է: Յուրաքանչյուր շաբաթվա ընթացքում քվեարկությանը մասնակցած բոլոր մասնակիցները մասնակցում են խաղարկության, որի ժամանակ պատահականության սկզբունքով ընտրվում է 80 մասնակից, ովքեր ստանում են մվեր՝ 50 ֆուտբոլային գնդակներից, 15 անլար ականջակալներից և 15 լիցքավորիչ սարքերից (power bank) մեկը: Նվերները կհանձնվեն յուրաքանչյուր խաղարկությունից հետո՝ մեկ շաբաթ անց:

Քվեարկությունը SMS-ով

- Հունիսի 10-ին Ucom-ի շարժական հեռախոսակապի ծառայության բոլոր բաժանորդներն կստանան կարճ հաղորդագրություն մրցույթի պայմանների վերաբերյալ: Քվեարկությանը մասնակից դառնալու համար անհրաժեշտ կլինի, որպեսզի բաժանորդը 2020 կարճ համարին ուղարկի «uMeter» բառը: Յուրաքանչյուր օր բաժանորդը ստանում է կարճ հաղորդագրություն հաջորդ օրվա այն խաղի վերաբերյալ, որի համար պետք է քվեարկի: Քվեարկությունը սկսվում է տվյալ խաղի նախորդ օրը 12:00-ից և ավարտվում խաղի օրը առավոտյան 08:00-ին: Ընդ որում, եթե բաժանորդը «uMeter» բառը պարունակող մասնակցության հաղորդագրությունը ուղարկում է խաղի նախորդ օրը 12:00-ից հետո, նա չի ստանա խաղի քվեարկության վերաբերյալ կարճ հաղորդագրությունը, հետևաբար, այդ օրվա խաղի քվեարկությանը չի կարողանա մասնակցել, այլ կմասնակցի քվեարկությանը միայն հաջորդ օրվանից:



- Քվեարկության կարճ հաղորդագրության մեջ նշված կլինեն հավաքականների անունները և նրանց օգտին քվեարկելու թվերը, օր.՝ 1. Իտալիա, 2. Թուրքիա, 3. Ռչ-ոքի:
- Մեկ մասնակիցը կարող է քվեարկել յուրաքանչյուր խաղի համար միայն մեկ անգամ:
- Ինտերակտիվ խաղարկության մեկնարկը կազդարարվի նաև Ucom և Ucom TV FB էջերում, հունիսի 10-ին, որտեղ կհրապարակվեն մրցույթի մասնակցության պայմանները:
- Քվեարկության մասնակիցների կողմից քվեարկության համար ուղարկվող բոլոր կարճ հաղորդագրությունների համար վճար չի հաշվարկվի:

Քվեարկությունը Facebook-ում

- «Facebook»-ում քվեարկությունը նախատեսված է Ucom-ի ֆիքսված ծառայությունների բաժանորդների համար և իրականացվելու է մեսինջեր չատբոտի միջոցով:
- Ամեն օր լինելու է հրապարակում հաջորդ օրվա խաղերից մեկի վերաբերյալ: Մասնակիցները պետք է սեղմեն մրցութային հրապարակման նկարագրության լինքը և հայտվեն մամակագրության բաժնում > «Get Started»
- Սկզբում մասնակիցները պետք է տրամադրեն Ucom ֆիքսված ծառայության ID-ն: Այնուհետև պետք է քվեարկեն՝ ընտրելով տարբերակներից մեկը, օրինակ, Իտալիա, Իսպանիա, Ռչ-ոքի:
- Մեկ մասնակիցը կարող է քվեարկել յուրաքանչյուր խաղի համար միայն մեկ անգամ:

Քվեարկության ամփոփում և նվերների տրամադրում

Յուրաքանչյուր խաղի քվեարկության արդյունքները ցուցադրվելու են Ucom TV ցանցում՝ «uMeter» ինտերակտիվ ցուցիչով, որը ցույց է տալու, թե թիմերից որին են նախապատվություն տալիս Ucom բաժանորդները: Ընդ որում արդյունքներում ամփոփված են լինելու թե «SMS», թե «Facebook»-ի քվեարկության տվյալները:

Յուրաքանչյուր շաբաթվա վերջում՝ ուրբաթ օրը այդ շաբաթվա «SMS»-ի և «Facebook»-ի քվեարկությունների մասնակիցների հեռախոսահամարները և ID համարները մասնակցելու են պատահականության սկզբունքով ընտրության, որը «live» տարբերակով ցուցադրվելու է Ucom TV-ի ֆեյսբուքյան էջում: Ընտրվելու են 80 մասնակիցներ, որոնք ստանալու են նվեր՝ ֆուտբոլային գնդակ, անլար ականջակալ կամ լիցքավորիչ սարք (power bank): Խաղի արդյունքը ճիշտ կամ սխալ կանխատեսելու փաստը որևէ դեր չի խաղում հաղթելու համար:



Քվեարկության մասնակիցների ID-ները մեր մասնագետների կողմից կնույնականացվեն մեր ֆիքսված ծառայությունների բաժանորդների բազայի ID-ների հետ և միայն մեր ֆիքսված ծառայությունների բաժանորդները կմասնակցեն հաղթողների ընտրությանը: Մեկ անգամ նվեր ստացած մասնակիցը չի կարող երկրորդ անգամ նվեր ստանալ:

Նվերները ստանալու համար մասնակիցները պետք է ներկայացնեն անձնագիրը, որով կնքված է Ucom-ի ֆիքսված կամ շարժական ծառայության պայմանագիրը:

Նվերները տրամադրվելու են Ucom-ի սպասարկման կենտրոններում: Երևանի դեպքում՝ Հյուսիսային պողոտայի սպասարկման կենտրոնում, իսկ մարզերի դեպքում՝ նվերը կուղարկվի հաղթած մասնակցի բնակավայրին ամենամոտ գտնվող սպասարկման կենտրոն:

Արդյունքում

4 շաբաթվա ընթացքում 320 մասնակից պատահականության սկզբունքով կստանան նվեր՝ ֆուտբոլային գնդակ, անլար ականջակալ կամ լիցքավորիչ սարք (power bank):

Ընդհանուր պայմաններ

- Ինտերակտիվ խաղարկությանը կարող են մասնակցել միայն 16 տարեկանը լրացած Ucom-ի ֆիքսված և շարժական ծառայություններից օգտվող բաժանորդները կամ նրանց ընտանիքի անդամները:
- Ինտերակտիվ խաղարկությանը Facebook սոցիալական հարթակի միջոցով կարող են մասնակցել միայն իրական օգտատերերը՝ միայն մեկ անձնական հաշվով: Խաղարկությանը չեն կարող մասնակցել կեղծ՝ առանց գլխավոր նկարի և այլ նկարների, առանց ընկերների, առանց հրապարակումների, միայն գովազդային հրապարակումներ կատարած և նմանատիպ օգտատերերը:
- Նվերը ստանալու համար Facebook սոցիալական հարթակի հաղթող օգտատերը պետք է ցույց տա, որ տվյալ էջն իրն է (իր անձնական հաշիվն է):
- Նվերը ստանալու համար մասնակիցը պետք է ցույց տա իր անձնագիրը, որտեղ եղած գրանցման հասցեն պետք է լինի Ucom-ի ֆիքսված կամ շարժական ծառայությունների տվյալների բազայում:
- Ինտերակտիվ խաղարկությանը կարող են մասնակցել մինչև 11.07.2021-ը՝ ժամը 08:00:
- Արդյունքները կհրապարակվեն յուրաքանչյուր ուրբաթ:
- Մասնակցելով ինտերակտիվ խաղարկությանը՝ օգտատերը համաձայնվում է, որ ընտրվելու դեպքում իրեն նվերը հանձնելու նպատակով ինքը պարտավոր



է տրամադրել իր անձնագրային տվյալները (չներկայացնելու դեպքում նվերը չի տրամադրվի):

- Սcom աշխատակիցները և նրանց ընտանիքի անդամները չեն կարող մասնակցել ինտերակտիվ խաղարկությանը:
- Ինտերակտիվ խաղարկությունը և քվեարկության արդյունքները որևէ կապ չունեն տոտալիզատորների կանխատեսումների հետ և Սcom-ը ոչ մի պատասխանատվություն չի կրում նման հարթակներում կանխատեսումների համար:

Ժամկետներ

10.06.2021-ից մինչև 11.07.2021-ը՝ ժամը 08:00